Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 10 (373) 1-17 հունիս, 2015թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ադրբեջանի խավարը մեր ձեռքի գործը չէ, բայց եւ չենք կարող կասեցնել

Եվրոպական խաղերը Բաքվի համար եւս մեկ առիթ են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում հայտվելու համար: Ադրբեջանը ջանք չի խնայել «ավելի եվրոպական» երեւալու համար: Սակայն, ինչպես ասում են, մեդալը երկու կողմ ունի: Մինչ ադրբջանական եւ ադրբեջանամետ լրատվամիջոցները առիթը բաց չթողնելով Ադրբեջանը հրամցնում են վարդագույն երանգներով, այս խաղերը առիթ եղան նաեւ աշխարհում ավելի ռեալ մտածողների համար բարձրաձայնել Ադրբեջանի մութ ու սեւ կողմերը: Այնպես որ, ուշադրությունն Ադրբեջանի վրա միանշանակ չէր:

Խաղերի հյուրընկալող Ադրբեջանը, հսկայական նյութական միջոցներ ծախսելով դրանց կազմակերպման վրա, նպատակ ունի ոչ միայն ինքն իրեն քաղաքակիրթ ներկայացնելու, այլեւ միաժամանակ իրականացնելու այս կամ այն երկրի հետ իր քաղաքական նկրտումներն ու շահարկումները:

Իրականում, գաղտնիք չէ, որ երկիրն այնքան էլ բարվոք վիճակում չի գտնվում: Օր օրի սաստկացող իշխանական բռնաճնշումները, մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարումները, գրաքննությունը, կոռուպցիան, 100-ից ավելի քաղբանտարկյալների առկայությունը, հաստատ չեն վկայում Ադրբեջանի բարի համբավի մասին, ինչքան էլ երկրի ղեկավարությունը փորձի մեծաքանակ գումարներ ծախսել ու ինչ-որ բան աշխարհին ցույց տալ: Իրականությունը սքողել անհնար է, քանզի Ադրբեջանում տիրող «տխուր» իրավիճակի մասին բարձրաձայնում են միջազգային կազմակերպությունները, միջազգային լրատվամիջոցները, մի շարք առաջատար երկրների դեմքեր, ովքեր չզլացան խաղերի նախաշեմին հայտարարել մասնակից պետություններին՝ բարձր մակարդակի պատվիրակություն չուղարկել Բաքու: 45 միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ, քաղաքական գործիչներ, փորձագետներ պետությունների ղեկավարներին եւ միջազգային հանրությանը կոչ են անում բոյկոտել Բաքվի Եվրոպական խաղերը եւ սանկցիաներ կիրառել Ադրբեջանի պաշտոնատար անձանց նկատմամբ:

Բաքվի հանդեպ, հիրավի, անհարգալից վերաբերմունքի դրսեւորում է նաեւ մի շարք առաջադեմ երկրների առաջին դեմքերի՝ խաղերի բացմանը ներկա գտնվելուց հրաժարվելու որոշումը եւ այդ վերաբերյալ նրանց հստակ մեսիջը՝ պահանջելով Ադրբեջանից քայլեր ձեռնարկել երկրում ժողովրդավարության հաստատման եւ մարդու իրավունքների ազատության պայմանների ստեղծման համար: Խոհեմներից հետ մնացին նրանք, որոնց համար ժողովրդավարությունն ու ազատության սկզբունքները ստորադաս են քաղաքական շահերի ու քաղաքական խաղերի նկատմամբ: Ռուսաստանն էլ չհրաժարվեց անազատ երկում ազատորեն հանդես գալուց՝ նախագահի մակարդակով: Դրան գումարած՝ Բաքվում կայացան Պուտին-Էրդողան, Պուտին-Ալիեւ հանդիպումներ: Իսկ հայտնագործություն չէ, որ Ալիեւի եւ Պուտինի հանդիպման օրակարգային հիմնական հարցերից մեկն էլ ղարաբաղյան հակամարտությունն է: Այսպես, Ադրբեջանը «ձեռի հետ» նաեւ ղարաբաղյան հարցն է քննարկման սեղանին դնում եւ դեռ անհայտ են այդ հանդիպման «գոհարները»:

Եվ վերջում ամենակարեւորներց մեկը՝ այդ խաղերին մասնակցում է նաեւ Հայաստանի պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված են նաեւ արցախցի մարզիկներ: Հաղթանակ եւ հաջողություն Բաքվում եռագույնը բարձրացրած մեր խիզախներին:





Մենք բաց ձեւաչափով վեր ենք հանում կոնֆլիկտը. Արմեն Ռուստամյան

Երեւանում հունիսի 8-9-ը տեղի է ունեցել «Սոցիալիստական ինտերնացիոնալի»՝ ԱՊՀ-ի, Կովկասի եւ Սեւ Ծովի հանձնախմբի երկօրյա ժողովը:

Հայ Յեղափոխական Դաշնակցության կողմից հյուրընկալվող հանձնախմբի ժողովին մասնակցելու համար Երեւանում էին սոցիալիստական եւ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչներ Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, Ղազախստանից, Բելառուսից, Մոլդովայից, Հունգարիայից, Ղրղզստանից, ինչպես նաեւ Ադրբեջանից:

Ժողովը «Սոցինտերնի» գլխավոր քարտուղար Լուիս Այալայի առաջարկով սկսվել է մեկ րոպե լռությամբ՝ Վահան Հովհաննիսյանի հիշատակը հարգելով:

Այալայի խոսքով՝ նաեւ Վահան Հովհաննիսյանի ակտիվ աշխատանքի շնորհիվ ակտիվացավ աշխատանքը Հայաստանի հետ: Մինչ օրակարգային հարցերին անցնելը, ժողովի բացման իր խոսքում Այալան անդրադարձել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: «Հուսով եմ, որ կգա մի օր, երբ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ կհաստատվի իրական խաղաղություն՝ Ցեղասպանության ճանաչմամբ: «Սոցինտերնը» նաեւ հիանալի հարթակ է, նոր հնարավորություն, որպեսզի մեկ սեղանի շուրջ իրենց տեսակետները հայտնեն նաեւ Ադրբեջանի եւ Հայաստանի ներկայուցիչները»,- ասել է Լուիս Այալան:

Տարածաշրջանի հակամարտությունների խաղաղ կարգավորում, ժողովրդավարության ապահովում եւ ամրապնդում, ԱՊՀ, Կովկասյան եւ Սեւծովյան երկրներում սոցիալ-դեմոկրատական առաջնահերթություններ. այս հարցերն էին ընդգրկված Հայ Յեղափոխական Դաշնակցության հյուրընկալած ժողովի օրակարգում:

«Ընդհանուր առմամբ, անդրադառնում ենք ընթացիկ քաղաքականության հարցերին, սոցիալ-դեմոկտարական խնդիրներին, ինչպես նաեւ՝ դրանց հաղթահարմանն ուղղված լուծումներին: Իհարկե, կարեւորագույն մաս են կազմում նոր աշխարհաքաղաքական, մասնավորապես՝ ուկրաինական դեպքերը: Սակայն, բացի դրանից, ԱՊՀ տարածքում ունենք շատ խնդիրներ, որոնք քննարկվելու են, այդ թվում՝ Ղարաբաղյան հիմնախնդիրը»,- ասել է ՀՅԴ Բյուրոյի անդամ Արմեն Ռուստամյանը:

Հիշեցնենք, որ այս հանձնաժողովը Երեւանում առաջին անգամ ժողով է գումարել 2010 թվականի հունիսին, իսկ նույն թվականի հոկտեմբերին ժողովը կայացել է Բաքվում, որին մասնակցել են նաեւ Դաշնակցության ներկայացուցիչները:

Երեւանյան այս ժողովի ավարտին համատեղ բանաձեւ է ընդունվել:

Հանձնաժողովի հայաստանյան ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը համաժողովից հետո լրագրողների հետ զրույցում նշել է. «Ես ուզում եմ ընդգծել հանձնաժողովի դերը: Շատ յուրահատուկ ձեւաչափ է սա: Մենք բաց ձեւաչափով վեր ենք հանում կոնֆլիկտը: Մասնավորապես՝ Հարավային Կովկասի բոլոր երկրների սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչներն այս հարթակում հանդիպում են եւ քննարկում բոլորին հուզող խնդիրները: Այս հանձնաժողովը բավական կենսունակ է եւ կարողանում է իր ուրույն դերակատարումն ունենալ»:

Անդրադառնալով ադրբեջանցի ներկայացուցչի դիրքորոշմանը՝ Ռուստամյանն ասել է. «Մենք, իսկապես, այստեղ փորձում ենք հասնել համախոհության: Մեր հիմնական նպատակը փոխադարձ ըմբռնման հասնելն է: Պետք է ամեն ինչ անել, որ ժողովրդավարության ներդրման միջոցով հասնենք փոխհամաձայնության: Ադրբեջանի մեր կոլեգաներն էլ են ընդունել այս սկզբունքները: Մենք բացառել ենք պատերազմի միջոցով հարցերի կարգավորումը»:

«Սոցինտերն»-ի գլխավոր քարտուղար Լուիս Այալան ընդգծել է, որ Հայաստանի հետ համագործակցությունը Սոցինտերնի անդամ ՀՅԴ-ի միջոցով տարեցտարի ամրապնդվում է:

Նա նշել է, որ կառույցն իր համերաշխությունն է հայտնել ՀՅԴ-ին՝ ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումների իրականացման վերաբերյալ կուսակցության դիրքորոշման հարցում՝ կարեւորելով երկրում բարեփոխումների խորացումը եւ ժողովրդավարության ամրապնդման օրակարգի առաջմղումը:

Կառավարության գործունեության ծրագիրը ներկայացվեց ԱԺ եւ արժանացավ հավանության

Հունիսի 10-ին տեղի ունեցավ ԼՂՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանի եզրափակիչ լիագումար նիստը, որը նախագահում էր ԱԺ նախագահ Ա. Ղուլյանը: Նիստին ներկա էին ԼՂՀ կառավարության անդամները՝ վարչապետ Ա.Հարությունյանի գլխավորությամբ: ԼՂՀ վարչապետը ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015-2017 թթ. գործունեության ծրագիրը, որի հավանության հարցն էլ նիստի օրակարգում էր:

Վարչապետն իր ելույթում ներկայացրեց կառավարության գործունեության հիմնական գերակայությունների ապահովման համար ստանձնած պարտավորություններն ու նախատեսված ծրագրերը: Նա առանձնացրեց չորս գերակա ուղղություն՝ տնտեսական զարգացում եւ աճի կայուն տեմպերի ապահովում, հասարակության բոլոր անդամների համար կյանքի բարեկեցիկ եւ արժանապատիվ պայմանների ստեղծում, պետականաշինությունն ու պաշտպանունակությունն ապահովող ինստիտուտների զարգացում, ԼՂՀ միջազգային ճանաչում եւ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորում:

Ծրագրի շուրջ ԱԺ խմբակցությունների պատգամավորները գործադիրի ղեկավարին ուղղեցին իրենց հարցադրումները:

Հիմք ընդունելով կանոնակարգային ընթացակարգը՝ խորհրդարանի նախագահը հայտարարեց, որ կառավարությանն անվստահություն հայտնելու մասին ԱԺ որոշման նախագիծ չներկայացվելու կամ նման որոշում չընդունվելու դեպքում՝ կառավարության գործունեության ծրագիրը համարվում է հավանության արժանացած:

ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, հանդես գալով առաջին նստաշրջանն ամփոփող եզրափակիչ ելույթով, նշեց, որ խորհրդարանը ձեւավորել է իր մշտական մարմինները, կազմավորվել են հանձնաժողովներն ու խմբակցությունները: Խորհրդարանում ընթացող 2014 թվականի պետական բյուջեի կատարողականի հանձնաժողովային քննարկումների ավարտից հետո՝ հունիսի վերջին տասնօրյակում օրենսդրական հարցերի քննարկման նպատակով կիրավիրվի արտահերթ նստաշրջան:

ԱԺ նիստի հաջորդ օրը հրապարակվեց ԱԺ որոշումը՝ կառավարության ներկայացրած ծրագրին խորհրդարանի վստահության քվեն ստանալու մասին: Այդ կապակցությամբ Ա. Ղուլյանը հանդես եկավ գործադիրի ղեկավարին ուղղված շնորհավորական ուղերձով եւ համոզմունք հայտնեց, որ օրենսդիր-գործադիր համագործակցությունն ու կառուցողական երկխոսությունն իրենց ներդրումը կունենան պետական ծրագրերը կյանքի կոչելու գործում:

«ԱՊԱՌԱԺ»

ՀՅԴ պատգամավորները հանդես եկան ակտիվ հարցադրումներով

Հունիսի 10-ին ԼՂՀ ԱԺ նիստում «Դաշնակցություն» խմբակցության պատգամավորները հանդես եկան գործադիրի ղեկավարին ուղղված մի շարք հարցադրումներով, որոնք վերաբերում էին կառավարության՝ 2015-2017թթ. գործունեության ծրագրին:

Խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանի հարցադրումը վերաբերում էր կառավարության ծրագրում ներառված կառավարության կազմում կառուցվածքային փոփոխություններ իրականացնելուն: Պատգամավորին հետաքրքրում էր, թե ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում: Այդ հարցի վերաբերյալ վարչապետ Ա. Հարությունյանը չցանկացավ բացել փակագծերն ու ասաց. «Նախատեսվում է կառուցվածքային փոփոխություններ կառավարության կազմում: Չեմ ուզում այդ առումով փակագծերը բացել: Անպայման, մինչեւ օրինագծի ներկայացումը, մենք կքննարկենք այդ փոփոխությունները ֆրակցիաների ղեկավարների հետ»:

Դ. Իշխանյանը նաեւ հետաքրքրվեց կառավարության ծրագրով նախատեսված գյուղատնտեսական ապահովագրման համակարգի ներդնմամբ: Համակարգի ներդնումը խիստ անհրաժեշտություն համարելով՝ պատգամավորը հարցրեց, թե ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվելու այդ ուղղությամբ: Չբացելով փակագծերը՝ վարչապետ Ա. Հարությունյանը նշեց, որ գյուղատնտեսությունն այն համակարգն է, որը մյուս ոլորտներից տարբերվում է ապահովագրության տեսանկյունից: «Միանշանակ պետական բյուջեի համար նոր ծախսային փոփոխություն է հանդես գալու, դրա համար էլ պիտի քննարկենք, թե ինչ պիտի անենք, բայց այն, որ համակարգի ներդնումն Արցախում անհրաժեշտություն է՝ չի կարելի ժխտել»,- ասաց վարչապետն ու հավելեց, որ վերջին տարիներին ինչ-որ ապահովագրական միջոցառումներ այդ ոլորտում փորձել են իրականացնել, սակայն հարկավոր է դրանք կանոնակարգել: Գյուղացին պետք է իմանա, թե արտակարգ իրավիճակների դեպքում պետության կողմից ինչպիսի աջակցություն կարող է ակնկալել:

«Այս ծրագիրը, ինչքան էլ լավը լինի, կաբինետներից դուրս չի գա, եթե չդառնա բոլոր ղեկավար մարմինների եւ ժողովրդի սեփականությունը,- ԱԺ հավանությանը ներկայացված ԼՂՀ կառավարության ծրագրի շուրջ հունիսի 10-ի ԱԺ նիստում նշել է «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Ա. Սարգսյանը եւ հարց ուղղել գործադիրի ղեկավարին,- ինչպե՞ս եք պատրաստվում իրականացնել ներկայացված ծրագրային կետերի վերաբերյալ վերահսկողության մեխանիզմը»:

Հարցի վերաբերյալ Ա. Հարությունյանն ասել է, որ երկրում վերհսկողության մեխանիզմները գործում են, եւ վարչապետն ունի վերահսկողական ծառայություն, որը կատարում է վարչապետի հանձնարարականները՝ ստուգումներ, գնահատականներ, վերլուծություններ է իրականացնում:

«Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Լեռնիկ Հովհաննիսյանն իր հարցադրումներից մեկում անդրադարձել է հանրապետությունում կենսաթոշակների կուտակային համակարգին, որին ի պատասխան վարչապետ Ա. Հարությունյանը նշել է, որ համակարգի ներդնումը հետաձգվել է անորոշ ժամկետով. «Այսօր կուտակային համակարգի ներդնման վերաբերյալ վերջնական որոշում դեռ չկա»,- ասել է վարչապետը եւ հավելել, որ այդ հարցում հետեւում են Հայաստանի Հանրապետության փորձին:

Խմբակցության պատգամավոր, ԼՂՀ ԱԺ փոխխոսնակ Վահրամ Բալայանի հարցը վերաբերում էր երկրում արտահանման եւ ներմուծման ծավալների անհամապատասխանությանը, կառավարության՝ նոր շուկաների հայթայթման ասպարեզում նախատեսվող ծրագրերին: Այս հարցի վերաբերյալ գործադիրի ղեկավարն ասաց, որ նպատակն է ոչ թե ներմուծումը կրճատել, այլ սպառվող ապրանքների ծավալը քչացնել՝ ընդհանուր ներմուծման ծավալներով: Նա նաեւ կարեւորեց այն, որ մեր տեղական շուկայում սպառվող ապրանքների ծավալի մեջ տեղական արտադրանքի ծավալը մեծանում է: Իսկ Նոր շուկաների ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքներ կատարվում են, թեեւ, գործադիրի ղեկավարի խոսքով, այդ ուղղությամբ անելիքներ ունեն դեռ: «Պետք է տնտեսությունը զարգանա, ապրանք ունենանք վաճառելու, հետո մտածենք, թե որտեղ այն վաճառենք»,- ասել է վարչապետը:

Կառավարության ծրագրով նախատեսվում է ստեղծել 2000-ից ավելի նոր աշխատատեղեր: Պատգամավոր Ռիտա Մնացականյանի հարցադրումը հենց այս թեմայով էր. ինչքանո՞վ է դա իրատեսական, որ՞ ոլորտներում է նախատեսված եւ ի՞նչ աշխարհագրությամբ պիտի այն իրականացվի: «Հանքարդյունաբերություն, էներգետիկա, գյուղատնտեսություն, վերամշակում. այս բոլոր ոլորտներում նախատեսվում է աշխատատեղերի բացում, իսկ աշխարհագրությունը հետեւյալն է՝ Արաքսի ափից մինչեւ Թալիշ, Քարվաճառ քաղաքից մինչեւ Կովսական: Բոլոր տեղերում ինչ-որ փոքր պրոեկտներ կան նախատեսված»,-հնչեցված հարցի վերաբերյալ նշել է ԼՂՀ վարչապետը:

«Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Ալյոշա Գաբրիելյանի կողմից հնչեցված հարցերից մեկը գյուղատնտեսության բնագավառին էր վերաբերում: Պատգամավորը հետաքրքրված էր գյուղատնտեսության սուբսիդավորման տարբեր ձեւերի կիրառմամբ. արդյո՞ք կառավարությունը չի մտածում սուբսիդավորել գյուղատնտեսությունը վերջնական արդյունքով: Հարցին ի պատասխան՝ Ա. Հարությունյանն ասաց, որ կառավարությունը սուբսիդավորման քաղաքականությունը կիրառում է ոչ միայն ուղղակի սուբսիդավորելով, այլ կոնկրետ քայլերի միջոցով: Վարչապետի խոսքով՝ կառավարությունը բանակցություններ է տանում տարբեր կազմակերպությունների հետ՝ գարու, ցորենի, մսի, կաթնամթերքի գների հետ կապված:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՅ Դաշնակցությունը դարձավ եվրոպական սոցիալիստների կուսակցության (PES) անդամ

Բուդապեշտում գումարվող Եվրոպական սոցիալիստների կուսակցության (ԵՍԿ, PES) 10-րդ կոնգրեսը հաստատեց Հայ Յեղափոխական Դաշնակցության անդամակցությունն այդ կազմակերպությանը՝ որպես դիտորդ անդամ (Եվրոմիության ոչ անդամ եւ կամ Եվրոմիության անդամակցության ոչ թեկնածու երկրների կուսակցությունները այլ կարգավիճակ չեն կարող ունենալ):

Ընդառաջելով ԵՍԿ-ի նախագահության առաջարկին՝ կոնգրեսը նաեւ հաստատեց անդամակցությունը Վրաստանից («Վրացական երազ»), Եգիպտոսից, Մարոկոյից եւ Իտալիայից կուսակցությունների:

Կոնգրեսի կողմից ԵՍԿ-ի նախագահ վերընտրվեց Բուլղարիայից Սերգեյ Ստանիշեւը: Մյուս թեկնածուն Իսպանիայից էր՝ Էնրիքե Պարոնը:

«Եվրոպական սոցիալիստների կուսակցությանը Դաշնակցության անդամակցությունը նոր հնարավորություններ է տալիս՝ եւրոպական քաղաքական այդ ընտանիքի անդամներին հետ ավելի սերտ համագործակցություն հաստատելու տեսանկյունից»,- ասել է ՀՅԴ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ, ՀՀ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանը:

«ԱՊԱՌԱԺ»

Կայացավ ՀՅԴ «Ա. Մկրտչյան» կոմիտեության 37-րդ Ներկայացուցչական ժողովը

Հունիսի 13-ին ՀՅԴ Արցախի «Նիկոլ Դուման» կենտրոնում կայացավ ՀՅԴ Ստեփանակերտի «Արթուր Մկրտչյան» կոմիտեության 37-րդ Ներկայացուցչական ժողովը: Ժողովին մասնակցում էին շրջանավարտ կոմիտեի անդամներ, կոմիտեության խմբերից երկուական պատգամավորներ, ներկայացուցիչ ՀՅԴ Արցախի ԿԿ-ից, հրավիրյալ անձինք: Ժողովն ամփոփեց ու գնահատական տվեց շրջանավարտ կոմիտեի մեկամյա գործունեությանը, քննարկեց մի շարք հարցեր եւ առաջարկներ ու բանաձեւեր փոխանցեց նորընտիր կոմիտեին:

Ժողովի վերջում կայացավ քաղաքային կոմիտեի ընտրություն, որի ընթացքում 5 ընկերներ՝ Կամո Բարսեղյանը, Վահագն Դադայանը, Ստելլա Մարգարյանը, Գագիկ Խաչատրյանը, Արարատ Ստեփանյանը, ձեւավորեցին նորընտիր կոմիտեն:

Հունիսի 14-ին կայացավ նաեւ ՀՅԴ Ասկերանի «Բերդ» կոմիտեության հերթական Ներկայացուցչական ժողովը, որի ընթացքում ձեւավորվեց նոր կոմիտե հետեւյալ անդամներով՝ Գեղամ Գրիգորյան, Կարինե Բախշիյան, Սեւակ Բաղդասարյան, Սուրեն Թովմասյան, Աշոտ Հայրիյան:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵԽԽՎ-ն փորձում է ԼՂՀ հարցով նոր ձեւաչափ ստեղծել Մինսկի խմբի շրջանակներից դուրս

ՀՀ Ազգային ժողովում ճեպազրույցների ժամանակ լրագրողները պատգամավորներից հետաքրքրվեցին, թե ինչպես է եղել, որ ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովում ընդունվել է «խայտառակ փաստաթուղթ», որը քվեարկության է դրվելու հունիսի 22-26-ին տեղի ունենալիք ԵԽԽՎ ամառային նստաշրջանում եւ դառնալու է բանաձեւ:

Նշենք, որ «Ադրբեջանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեությունը» վերնագրով փաստաթղթում գրված է. «Հայաստանը օկուպացրել է Լեռնային Ղարաբաղը». հեղինակները Ադրբեջանի հարցով համազեկուցողներ Պեդրո Ագրամունդն ու Թադեուշ Իվինսկին են:

ՀՅԴ պատգամավոր Աղվան Վարդանյանն այս վերբերյալ նշել է, որ զեկույցը նորություն չէ եւ արդեն մի քանի ամիս է՝ այս խնդիրը դրված է եւ հակազդեցության է բնականաբար արժանացել:

«Բայց, փաստորեն, ադրբեջանական լոբբիի մի ստվար զանգված է ձեւավորվել հանձնաժողովում: Մեր պատվիրակությունը մի անգամ բոյկոտեց եւ կարողացան տապալել, բայց այժմ կարծես պրոբլեմներն ավելի շատ են»,- ասել է նա եւ հավելել, թե զեկուցողները Հայաստանում էին, եւ հայկական կողմն իր դիրքորոշումները հստակ ներկայացրել է:

ՀՅԴ պատգամավորը նշել է, որ ԵԽԽՎ-ն փորձում է ԼՂՀ հարցի առնչությամբ նոր ձեւաչափ ստեղծել Մինսկի խմբի շրջանակներից դուրս, որն անընդունելի է, եւ դրա դեմ պետք է հայկական կողմը պայքարի:

«Ողբերգություն պետք չէ սարքել, ունենք պարզ բանաձեւեր, սա նաեւ աշխարհաքաղաքական խնդիր է, եւ եթե մենք կարողանանք հավասարակշռված քաղաքականություն իրականացնել, գուցե հնարավոր կլինի խուսափել ավելի մեծ ճնշումներից»:

Աղվան Վարդանյանի խոսքով՝ ուզած-չուզած, այսօր ձեւավորվել է ադրբեջանական այնպիսի ուժեղ լոբբի, որին Հայաստանն իր ուժերով չի կարող հակազդել:

Նա նաեւ հավելել է, թե ընդունված բանաձեւերը հայկական կողմի համար «զրոյական արժեք ունեն, եւ որեւէ բան չեն կարող խնդրում փոխել»:

«Միակողմանի զիջումները մենք բացառում ենք, եւ ես համոզված եմ, որ Հայաստանում չի գտնվի որեւէ մեկը, ով միակողմանի զիջումների կգնա»,- եզրափակել է նա:

«ԱՊԱՌԱԺ»

Բոլոր դեպքերում էլ դեմ ենք լինելու ապակայունացնող ծայրահեղություններին

Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ ճրտգ. Վիգեն Բաղումյանի հետ

- Պրն. Բաղումյան, Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցը բավականին սեւեռված պահեց համաշխարհային ընտանիքի ուշադրությունը Հայաստանի եւ հայության վրա:

Հայոց պահանջատիրության նոր փուլ ու հանգրվան թեւակոխելու Ձեր պատկերացումը: Որո՞նք են լինելու ըստ Ձեզ՝ հայության պահանջատիրական շեշտադրումները 100-րդ տարելիցից հետո:

- Ճիշտ է, հիմա մենք տրամաբանորեն թեւակոխում ենք պահանջատիրական նոր փուլ: Այն, որ ոմանք շեփորում են թե մենք՝ հայերս, դեռ չենք ձեւակերպել մեր պահանջները, ճշմարտությանը չի համապատասխանում: Տասնամյակներից ի վեր մեր պահանջները, որպես այդպիսին, հայտնի են: Ձեւակերպված ու գրված են մեր ազգային կուսակցությունների քաղաքական ծրագրերում՝ հողային պահանջ, նյութական հատուցում եւ մշակութային արժեքների վերականգնում: Հարցը այն է, թե ինչպիսի փուլերով կամ շեշտադրումով պետք է առաջ քաշվի մեզ բոլորիս հայտնի պահանջների ամբողջությունը: Այս վերաբերյալ բավական մանրակրկիտ ուսումնասիրություն է պատրաստվել ՀՅԴ-ի պատվերով: Հիմք ունենալով թե՛ մեր քաղաքական հայացքները, թե՛ միջազգային օրենքի նորմերը եւ թե՛ ժամանակակից աշխարհի հասկացությունները՝ մի քանի համաշխարհային ճանաչում ունեցող մասնագետներ կազմել են այն: Սա, իհարկե, դեռ տակտիկայի ոլորտում չէ, այլ հայեցակարգային մակարդակում է պահված:

Իհարկե, Ցեղասպանության ճանաչման փուլը խոշոր չափով ավարտված է: Միջազգային այն հաստատությունները, որոնց մոտ դեռեւս մի փոքրիկ մարդկային արժանապատվության նշույլ մնացել էր, արդեն արձագանքեցին: Բայց մենք դեռ ճանաչման փուլը պիտի առաջ մղենք Թուրքիայում, որտեղ արդեն ազգաբնակչության 10 տոկոսը ամբողջապես համոզվել է Ցեղասպանության պատմական իրողությանը, իսկ 15 տոկոսն այս կամ այն չափով ընդունում է հայկական «ջարդերի» պատմական իրողությունը եւ Թուրքիայի բարոյական պատասխանատուությունը: Սա բավական նոր երեւույթ է, ու եթե մենք այս ուղղությամբ ճիշտ քաղաքականություն վարենք ու լավ աշխատենք, ապա ավելի մեծ թվով Թուրքիայի քաղաքացիներ կշատացնեն վերոնշյալ տոկոսները, ինչը նախապայման է մեր պահանջատիրական արշավի հաջողության համար:

- Պրն. Բաղումյան, Արցախյան հիմնահարցի ներկայիս փակուղային թվացող ընթացքի փոփոխման հիմքեր տեսանելի՝ են: Դեպի Ռուսաստան թեքվելու եւ մասնավորապես Եվրասիական միություն մտնելու ադրբեջանական լարախաղացությունը որքանո՞վ է ազդելու նշված ստատուս քվոյի փոփոխմանը:

- Այդ մտահոգությունը տեղին է: Եթե Ադրբեջանը սակարկության միջոցով վերջնականապես որոշի մտնել Եվրասիական միություն, ապա արցախյան բանակցությունները կարող են հայտնվել վտանգավոր անհավասարության մեջ: Բայց մի շարք հարցեր, ինչպես օրինակ՝ թուրքական ազդակը, նավթային միջազգային ընկերությունների ներդրումներն Ադրբեջանում, Ռուսաստանի Դաշնություն-Արեւմուտք հակամարտությունը եւ դրան առնչվող սանկցիաների արգելքը եւ այլ արգելակիչ հանգամանքներ, այսօր դժվարացնում են Ադրբեջանի վերջնական թեքումը դեպի Եվրասիական միություն:

- ՀՅԴ Արցախի կառույցը վերջերս Արցախի խորհրդարանական ընտրություններում տոկոսային բարվոք դիրք ապահովեց ու փաստորեն հանդիսանում է Արցախի Հանրապետության քաղաքական 2-րդ ուժը: Անկախ առանձնայատկություններից, նաեւ հաշվի առնելով Հայաստանյան ներքաղաքական կյանքում իշխող Հանրապետական կուսակցության «մոնոպոլիան», ինչպիսի՞ դեր ու դիրք կարելի է վերապահել 125-ամյա ՀՅԴ-ին՝ հայաստանյան քաղաքական կյանքում:

- Հայաստանյան քաղաքական կյանքում մեր մոտեցումը միշտ էլ եղել է կառուցողական: Մենք միշտ փորձել ենք շինիչ ու պատասխանատու գործունեություն ծավալել, բարելավել իրավիճակը, բայց այդ պատրվակով, թեկուզ ակամա, չգնալ ապակայունացման, զանգվածային խառնակչության, քաղաքացիական ներքին բախումների: Բոլորս պիտի հասկանանք, որ Հայաստանի համար անհետաձգելիորեն անհրաժեշտ են տնտեսական ու սոցիալական բարեփոխումները, աղքատության վերացումը, հասարակական արդարության ու քաղաքացիական արժանապատվության հաստատումն ու բազմաթիվ այլ դրական պայմանների ստեղծումը: Սրանց ստեղծման գլխավոր խոչընդոտը, իհարկե, Հայաստանում իշխող համակարգն է, որն էլ, առաջին հերթին, պետք է վերանայի իր վարքագիծն ու նահանջի իր այսօրվա դիրքերից: Մյուս կողմից այս բարեփոխումների մղիչ ուժն ընդդիմությունն է, որն իր բազմաբնույթ եւ բազմոլորտ գործունեությամբ պիտի ապահովի իշխողների նահանջը եւ կերպափոխի անընդունելի համակարգը: Հարցի ամբողջ նրբությունն այն է, որ այս հոլովույթը ոչ մի կողմի անպատասխանատու քայլերի պատճառով չպիտի հանգի քաղաքացիական բախումների ու խաթարի երկրի ներքին ու արտաքին անվտանգությանը:

Մեր այս մոտեցումը, կարծես թե ի վերջո ընկալվում է հայաստանյան քաղաքական շրջանակներում: Եւ սա մենք համարում ենք մեր կարեվորագույն ձեռքբերումներից մեկը: Իսկ, թե քաղաքական որ թեւի մեջ կլինի ՀՅԴ-ն, համարում ենք երկրորդական: Եթե ընդդիմություն ենք, պահանջելու ենք բարեփոխումներ՝ բողոքելով ու քննադատելով: Եթե իշխանություն ենք, փորձելու ենք դուռ բացել բարեփոխումների համար, դյուրացնել՝ ծրագրեր առաջադրելով ու համոզելով: Երկու դեպքում էլ դեմ ենք լինելու ապակայունացող ծայրայհեղություններին եւ հնարավորինս կանխելու ենք դրանք:

«Ալիք» օրաթերթ

Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի ատենապետ Գասպար Կարապետյանն անդրադարձել է Թուրքիայի խորհրդարանական ընտրություններին

Եվրոպայի Հայ Դատի հանձնախումբը Թուրքիայի խորհրդարանական ընտրություններին HDP հրավերով իրականացրել էր դիտորդական առաքելություն: Հանձնախմբի ատենապետ Գասպար Կարապետյանը, անդրադառնալով ընտրություններին, պատասխանել է «Ապառաժ»-ի թղթակցի հարցերին:

- Անցյալ դարի 50-ականներից ի վեր՝ մենք հայազգի պատգամավոր չենք ունեցել Թուրքիայի ԱԺ-ում: Այսօր արդեն հայտնի է, որ 3 հայազգի պատգամավորներ են ընտրվել խորհրդարան՝ 3 տարբեր ուժերից: Ի՞նչ եք կարծում՝ սա պատմակա՞ն պահ է: Որքանո՞վ կարող է այս հանգամանքը նպաստավոր լինել մեզ՝ հայերիս համար. նկատի ունեմ հայկական հարցի առումով:

- Իրականություն է, որ տասնյակ տարիներ հետո Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր ընտրվեցին 3 հայեր եւ, մանավանդ, երեք տարբեր կուսակցությունների ցանկերով: Անշուշտ, այս ընտրությունը շատ կարեւոր իրադարձություն կարող է դառնալ հայ - թուրքական հարաբերությունների հոլովույթի ընթացքում: Սակայն հիմնական դերակատարները պիտի լինեն 3 հայ պատգամավորները, որոնք, անշուշտ, բացի իրենց ազգային պատկանելիությունից, չպետք է մոռանան, որ ընտրված են կուսակցական ցանկերով եւ ընդհանրապես իրենց նախաձեռնությունները պիտի լինեն կուսակցական որոշումներին համապատասխան: Ինչ վերաբերում է պատգամավորների ներդրումին հայկական հարցերի շուրջ՝ հավատում եմ, որ Թուրքիայի հայկական համայնքին դիմագրաված հարցերը բարձրացնելու համար իրենք դերակատար կարող են լինել, սակայն ընդհանրապես հայկական հարցի համար հարկավոր է չաճապարել եւ սպասել, որ յուրաքանչյուրն իր կարելիություններին համապատասխան փորձի քայլ առ քայլ հարցերը լուսարձակի վրա բերել:

Անշուշտ, Ժողովուրդների ժողովրդավարական կուսակցության (HDP) դիրքորոշումները վերաբերում են փոքրամասնությունների իրավունքներին եւ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցերի համար դրական են ու շեշտավորված: Այս կուսակցության ցանկով ընտրված Կարո Փալյանն ունի կարողություն՝ այս հարցերի համար դառնալ կարեւոր դերակատար: Եվ նա արդեն հայտարարեց, որ այդ ուղղությամբ պիտի պայքարի խորհրդարանում:

- Արդյո՞ք ազգությամբ հայ 3 թեկնածուների ընտրվելը խորհրդարանում Թուրքիայի կողմից իրական ժողովրդավարական մղումնե՞ր են, թ՞ե հերթական ձեւական ժեստ՝ ուղղված միջազգային հանրությանը:

- Այս իրականության հիմնական պատճառը կարելի է նկատել Ժողովուրդների ժողովրդավարական կուսակցության (HDP) որոշումը՝ իր ցանկերում ունենալով չորս հայ թեկնածուներին, որոնցից Կարո Փալյանը ընտրվել է խորհրդարան: Նկատի ունենալով նաեւ այն, որ այս ընտրությունները ճգնաժամային էին եւ յուրաքանչյուր քվե կարող էր ունենալ կարեւոր նշանակություն՝ մյուս կուսակցություններն էլ որոշեցին իրենց ցանկերում ունենալ հայ թեկնածուներ: Վերոհիշյալ իրողությունը նկատի ունենալով՝ պետք է նշել, որ Ժողովուրդների ժողովրդավարական կուսակցության (HDP) որոշումը սկզբունքային էր, իսկ մյուս երկու կուսակցությունների՝ AKP-ի եւ CHP-ի որոշումները մարտավարական շարժումներ էին՝ նկատի ունենալով նաեւ իրենց ներքին հավասարակշռությունները:

- Ռեջեփ Էրդողանը խոստանում էր հաղթել՝ թույլ չտալու համար Թուրքիայի մասնատումը՝ մեղադրանքներ ներկայացնելով Թուրքիան թուլացնողներին: Հիմա, երբ նա ընդունում է, որ չի հաղթել, կարելի՞ է համարել,որ Թուրքիայի մասնատման գործընթացը սկսվե՞լ է:

- Բոլորը գիտեին, որ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը պիտի օգտագործեր այս ընտրությունների արդյունքները, եթե իր կուսակցությունն ապահովեր հարկավոր մեծամասնությունը՝ երկրի սահմանադրությունը փոփոխության ենթարկելով եւ նախագահի իրավասությունները բազմապատկելով դառնալ երկրի միահեծան ղեկավարը: Որպեսզի այս թիրախին հասներ, հարկավոր էր, որ Ժողովուրդների ժողովրդավարական կուսակցությունը (HDP) չկարողանար դիմագրավել 10%-ի շեմը եւ մուտք չգործեր խորհրդարան, քանի որ այդ պարագայում հավելյալ երեսփոխանական աթոռները պիտի տրվեին AKP կուսակցությանը, եւ պիտի կարողանար ապահովել հարկավոր թիվը՝ փոփոխության ենթարկելու համար սահմանադրությունը: Ուրեմն, պիտի դիմեր բոլոր տեսակի սպառնալիքներին կամ մեղադրանքներին HDP-ի դեմ՝ նրան վարկաբեկելու եւ ժողովրդի մեջ վախի զգացում առաջացնելու:

- ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի պատվիրակությունը հրավիրված էր HDP կուսակցության կողմից՝ դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով: Ձեր տպավորությունները:

- Այս ընտրությունների արդյունքը այս պահին չի նպաստում Թուրքիայի մասնատման գործընթացին: Սակայն կարող է ստեղծել հնարավորություն՝ երկիրը դեպի ժողովրդավարական առաջընթաց մղելուն եւ փոքրամասնությունների իրավունքների հաստատմանը նպաստելուն:

Եվրոպայի ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբի պատվիրակությունը կատարել է դիտորդական առաքելություն Պոլսի 3 շրջաններում, ուր AKP իշխող կուսակցության կողմից տեղի ունեցան ընտրական օրենքի լուրջ խախտումներ՝ թիրախ ունենալով HDP կուսակցությունը: Անշուշտ, ընտրության արդյունքները հուսախաբ արին պարոն Էրդողանին, քանի որ HDP կուսակցությունն, ի վերջո ստանալով 13%, մուտք գործեց խորհրդարան՝ ունենալով 80 երեսփոխաններ: Հաջորդող օրերին պիտի հրապարակենք մեր զեկուցումը՝ այն ուղարկելով նաեւ բոլոր պատկան միջազգային կազմակերպություններին: Այս կետին անդրադառնալով՝ շեշտեմ, որ Արցախի ընտրություններն անհամեմատ ավելի կազմակերպված եւ արդար ու թափանցիկ էին, քանի որ մենք համապատասխան մասնագետների խմբով Արցախում եւս կատարելով դիտորդական առաքելություն՝ կարող ենք անցկացնել համեմատական::

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Հայ դատի հանձնախումբը Հայաստանի եւ ԼՂՀ-ի ֆինանսական հատկացման համար կդիմի Սենատին

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Հատկացումների ենթահանձնաժողովում քննարկվում է 2016 թվականի ֆինանսական տարում Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին ԱՄՆ արտաքին օգնության հատկացման հարցը: Հայ դատի ԱՄՆ հանձնախմբի փոխանցմամբ՝ Հայ դատի ԱՄՆ հանձնաժողովը Լեռնային Ղարաբաղի զարգացման եւ Հայաստանի տնտեսական աջակցության հարցով դիմել է օրենսդիր մարմնին:

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Հատկացումների հանձնաժողովը 2016 թվականի ֆինանսական տարվա վերաբերյալ քննարկումներից հետո լռություն է պահպանել Կովկասին տրամադրվելիք օգնության վերաբերյալ:

Հայ դատի ԱՄՆ հանձնախումբը տեղեկացնում է, որ այսուհետ իր հայացքն ուղղված է լինելու ԱՄՆ Սենատին, որն էլ վերջնականապես հաստատելու է 2016 թվականի ֆինանսական տարվա հատկացումները:

Հայ դատի հանձնախմբի պահանջները հետեւյալն են՝ առնվազն 5 մլն դոլար հատկացնել Լեռնային Ղարաբաղի զարգացման համար, 40 մլն դոլարի տնտեսական աջակցություն ցուցաբերել Հայաստանին:

Պահանջվում է նաեւ, որ Վրաստանին հատկացվելիք աջակցության 10 տոկոսը ուղղվի Սամցխե-Ջավախք շրջանում աշխատատեղերի ստեղծման ծրագրերին, հատուկ ուշադրության կենտրոնում պահել Սիրիայի հայերի, ասորիների եւ վտանգի տակ գտնվող մյուս փոքրամասնությունների խնդիրները, ինչպես նաեւ թիրախավորված աջակցություն ցուցաբերել Հայաստանին՝ հազարավոր սիրիացի գաղթականներին ապաստանելու համար:

Հատկացումների ենթահանձնաժողովի անդամներից նաեւ պահանջվել է որեւէ ռազմական օգնություն չցուցաբերել Ադրբեջանին, քանի դեռ այն չի համաձայնել դիպուկահարներին շփման գծից հանելու ԵԱՀԿ Մինսկի խմբի հորդորներին, չի դադարեցրել ագրեսիան եւ լիովին հանձն չի առնել ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորումը:

Փետրվարին ԱՄՆ նախագահ Օբամայի վարչակազմը հրապարակել էր 2016 ֆինանսական տարվա ԱՄՆ արտաքին օգնության բյուջեի տարբերակը, որով պետք է կրճատվեր անում կրճատել ԱՄՆ տնտեսական աջակցությունը Հայաստանին եւ Ադրբեջանին՝ պահպանելով այս երկու երկրներին հատկացվելիք ռազմական օգնության հավասարակշռությունը:

Նախագահն առաջարկել էր 2016-ին 18 մլն 360 հազար դոլարի տնտեսական աջակցություն տրամադրել Հայաստանին, որը եթե ընդունվի Կոնգրեսի կողմից, ՀՀ անկախությունից հետո ամենացածր օգնությունը կլինի ԱՄՆ կողմից:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայի դեմ Կիլիկիո Կաթողիկոսության հայցի հավանական հետեւանքները



Աշխարհասփյուռ հայությունը ողջունեց Կիլիկիո կաթողիկոսությանը՝ Թուրքիայի Սահմանադրական դատարան ապրիլի 27-ին դատական հայց ներկայացնելու համար՝ Սիսի իր պատմական նստավայրը վերադարձնելու պահանջով, որն այժմ գտնվում է Թուրքիայի Ադանա նահանգի Կոզան շրջանում: Կիլիկիո կաթողիկոսության նախկին աթոռանիստ կենտրոնը, որը հիմնադրվել է 1293 թվականին, բռնագրավվել էր թուրքական իշխանության կողմից 1921 թվականին՝ Հայոց ցեղասպանության տարիներին:

Արամ Ա կաթողիկոսը հայտարարեց, որ եթե թուրքական դատարանը մերժի հայցը, Կաթողիկոսությունը մտադիր է դատարանի որոշումը բողոքարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, որը պահանջում է սպառել բոլոր ներքին դատական ատյաններին դիմելու հնարավորությունները, մինչեւ Եվրոպայի խորհրդի անդամ երկրների դեմ հայց հարուցելը: Թուրքիայի կողմից Եվրադատարանի որոշումներն ընդունելուն թերահավատորեն վերաբերողները պետք է իմանան, որ Թուրքիայի Հանրապետությունը ենթարկվել է իր դեմ բոլոր վճիռներին՝ Եվրադատարանի իրավասությունը 1990 թվականին ճանաչելուց ի վեր:

Կաթողիկոսության հայցը շրջադարձային դեպք է մի շարք պատճառներով.

- Այն նպատակ ունի մասնակիորեն վերականգնել Ցեղասպանության ժամանակ հայ ժողովրդի կրած վիթխարի մարդկային, նյութական եւ տարածքային կորուստները:

- Այն տեղափոխում է «Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված Հայ Դատի ջանքերը դեպի դատաիրավական ոլորտ»,- ինչպես նշեց Արամ Ա կաթողիկոսը:

- Այն կարող է նախադեպ հանդիսանալ նմանատիպ իրավական պահանջների համար, ինչպես Արամ Ա կաթողիկոսը տեղեկացրեց «Նյու Յորք թայմս» թերթին անցյալ ամիս. «Հարյուր տարի անց, ես կարծում եմ՝ ճիշտ ժամանակն է, որ շեշտը դնենք հատուցման վրա... «Սա առաջին իրավական քայլն է: Դրան կհաջորդեն մեր պահանջները՝ վերադարձնելու բոլոր եկեղեցիները, վանքերը, եկեղեցապատկան հողերը եւ, ի վերջո, անհատական սեփականությունները: Մենք պետք է առաջ գնանք քայլ առ քայլ»:

Չնայած դատական հայցով Կաթողիկոսության հետապնդած վեհ նպատակներին՝ անցյալ շաբաթ տարաձայնություն առաջացավ հայկական համայնքում, երբ մի քանի կայքեր եւ թերթեր հաղորդեցին, թե Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը Թուրքիայի կառավարությունից պահանջել է «կամ վերադարձնել Սիսի կաթողիկոսարանը կամ վճարել 100 միլիոն թուրքական լիրայի (37 միլիոն դոլար) փոխհատուցում»: Ամերիկահայ հանրածանոթ ղեկավար դեմքերից մեկը՝ Կարո Արմենյանը, նախազգուշացնող հոդված գրեց՝ «Մեր սրբավայրերը սեփականություններ չեն» վերնագրով: Նա ընդգծեց, որ Կաթողիկոսության հայցը «մի շարք հարցականներ է հարուցում, որոնք այսօրվանից պետք է անցնեն մեր հավաքական փորձաքննության բովով՝ անցանկալի նախադեպերը կանխելու խոհեմ նախանձախնդրությամբ»: Նա նաեւ հորդորեց Կաթողիկոսությանը հստակեցնել փոխհատուցման գումարի հարցը, եթե լուրերը ճշգրտորեն չեն արտացոլում դատական հայցի բովանդակությունը:

Նման հստակեցում ստանալու ակնկալիքով անցյալ շաբաթ ես կապ հաստատեցի Կաթողիկոսարանի ներկայացուցիչների հետ: Նորին Սրբություն Արամ Ա կաթողիկոսի օգնական Հայր Հուսիկ Մարտիրոսյանն էլեկտրոնային նամակով ինձ հավաստիացրեց, որ «Կաթողիկոսության հայցը միայն մեկ հստակ նպատակ ունի՝ Կիլիկիո կաթողիկոսարանի վերադարձը»:

Ի պատասխան դատական հայցի պատճենն ինձ ուղարկելու խնդրանքին՝ հայտնի միջազգային իրավաբան եւ Կաթողիկոսարանի գլխավոր փաստաբան Փայամ Ախավանն ասաց, որ «հնարավոր չէ կամ նպատակահարմար ամբողջ դիմումը փոխանցել այս փուլում, երբ այն դեռ գտնվում է Թուրքիայի Սահմանադրական դատարանի վարույթում»:

Իրավաբան Ախավանը դրամական փոխհատուցմանը վերաբերող հարցերին տվեց հետեւյալ բացատրությունը. «Թուրքիայի Սահմանադրական դատարանի առջեւ դրված հիմնական պահանջն է՝ վերադարձնել Սբ. Սոֆիայի վանքը եւ տաճարը՝ թե՛ որպես Կաթողիկոսության սեփականության իրավունքի, թե՛ նաեւ հայ ժողովրդի համար կրոնական մեծ նշանակության պատճառով: Հայցով փոխհատուցում չի պահանջվում՝ հաշվի առնելով, որ սա անձնական սեփականություն չէ, այլ կրոնական եւ պատմական կարեւոր նշանակություն ունեցող գույք: Սակայն, մեր թուրք փաստաբանը խորհուրդ տվեց, որ համաձայն թուրքական օրենքների ու ընթացակարգերի, գույքային իրավունքների պահանջի (եւ ոչ թե կրոնական իրավունքի պահանջի) հետ կապված, անհրաժեշտ է Կաթողիկոսության կողմից վերապահել փոխհատուցում պահանջելու այլընտրանքային իրավունքը՝ նախնական գումար նախատեսելու պայմանով... Սակայն, ցանկանում եմ ընդգծել, որ հայցը փոխհատուցման համար չէ, այլ կալվածքի վերադարձի համար, որը կարող է օգտագործվել կրոնական պաշտամունքի եւ դրա հետ կապված մշակութային նպատակների համար»:

Ես կապվեցի Ստամբուլում բնակվող մի անկախ իրավաբանի հետ, որը հաստատեց, որ թուրքական օրենքն իսկապես պահանջում է կոնկրետ արժեք նշել սեփականության իրավունքի հարցով դատական վեճերի դեպքում:

Այժմ, երբ ֆինանսական հարցում հստակություն մտցվեց, այլ կարեւոր խնդիրներ են ծառանում Կաթողիկոսության եւ հայ ժողովրդի առջեւ: Հնարավոր է, որ որոշ հարցերի բարձրաձայնումը մի փոքր վաղաժամ է, սակայն միգուցե հայերը ցանկանան անդրադառնալ դրանց, որպեսզի կանխատեսեն թուրքական եւ եվրոպական դատարանների կողմից կայացրած որեւէ հնարավոր որոշման հետեւանքները.

1. Ի՞նչ է պատրաստվում անել Կաթողիկոսարանը, եթե թուրքական դատարանը կամ կառավարությունը թույլ տա վերականգնել Սիսի եկեղեցին եւ դրա օգտագործումը կրոնական պաշտամունքի համար՝ առանց սեփականության իրավունքի վերադարձի Կաթողիկոսությանը: Բացի այդ, ի՞նչ է անելու, եթե Թուրքիայի կառավարությունը նաեւ առաջարկի դրամական փոխհատուցում եկեղեցական նստավայրի վերակառուցման համար՝ առանց փոխանցելու գույքային իրավունքը:

2. Այն դեպքում, եթե թուրքական դատարանը կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռ կայացնի Սիսի եկեղեցու ունեցվածքը վերադարձնելու մասին, արդյոք Կաթողիկոսությունը կտեղափոխվի՝ իր պատմական նստավայրը, թե՝ կշարունակի տարագրության մեջ ապրել Անթիլիասում (Լիբանան):

Հաշվի առնելով թուրքական կառավարության վերջերս կատարած առաջարկները ասորական եւ սիրիական եկեղեցիների առաջնորդներին՝ վերադառնալու Թուրքիայում գտնվող իրենց պատմական նստավայրերը Սիրիայում ժամանակավոր տարագրությունից հետո, Թուրքիայի ղեկավարները կարող են հայկական դատական հայցը պատճառաբանելով՝ համոզել իրենց ներքին հակառակորդներին, եւ նման առաջարկ եւս ներկայացնել Կիլիկիո կաթողիկոսությանը:

Նախագահ Էրդողանը կարող է նման ժեստ անել հետեւյալ երեք պատճառներով.

1. Կանխել Եվրադատարանի վճիռը հօգուտ Կաթողիկոսության եւ խուսափել իրավական նախադեպ ստեղծելուց հետագա հայկական հայցերի համար:

2. Փիարի հաղթանակ արձանագրել միջազգային շրջանակներում, հատկապես նախորդ կիրակի կայացած խորհրդարանական ընտրություններում իր կուսակցության պարտությունից հետո:

3. Տնտեսական օգուտներ քաղել Սիսում Կիլիկիո կաթողիկոսարանի պատմական նստավայր ժամանող օտարերկրյա զբոսաշրջիկներից եւ հայ այցելուներից:

Հարութ ՍԱՍՈՒՆՅԱՆ

Թարգմանությունը՝՝

Ռուզաննա Ավագյանի

Մեր սրբավայրերը սեփականություններ չեն

Ժամանակն է, որ մենք ճշգրիտ ձեւակերպում տանք օրինական պահանջներին, մեր ազգային թղթածրարին: Այս առումով, Կիլիկիայի Մեծ Տան կաթողիկոսության կողմից նախաձեռնած դատական գործը Թուրքիայի Սահմանադրական դատարանի առջեւ՝ կարեւոր փորձագետություն է հանդիսանում այս մարզում տարվող Հայ դատի աշխատանքների համար: Այն նաեւ հարուցում է մի շարք հարցաքաններ, որոնք այսօր պետք է անցնեին մեր հավաքական փորձաքննության բովից՝ անցանկալի նախադեպեր կանխելու խոհեմ նախանձախնդրությամբ: Ըստ վերջին հրապարակումների, դատական գործի պահանջագիրը «գին» է դնում Սսի Սուրբ Աթոռի նստավայրը հանդիսացող հոգեւոր համալիրի վրա՝ միաժամանակ իրավունք տալով թուրք իշխանություններին ֆինանսական հատուցման միջոցով վերջ տալու վերոհիշյալ դատին եւ դառնալու անվիճելի սեփականատերը Սսի կաթողիկոսարանին: Մինչ այդ կարեւոր է, որ մեր պահանջատիրության թղթածրարը ձեւավորվի հստակ եւ անառարկելի չափանիշներով: Թուրքական տիրապետության տակ գտնվող հայոց հազարավոր սրբավայրերը մեր հոգեւոր ժառանգությունն են: Նրանք ունեին ՀԱՅՐԵՆԱԿԱՆ կարգավիճակ (patrimoine) ազգային անձեռնմխելի հարստության գերաստիճան հանգամանքով, որ ստիպողաբար խտացնում է հայ ազգի անցյալ, ներկա եւ ապագա սերունդներին անօտարելի իրավունքները: Ցեղասպանության հետեւանքները ծնող հատուցման սկզբունքը չի կարող բավարարել հայրենազրկման պարագան: Հայրենական ժառանգությունը հիմնովին տարբերում է անհատին եւ իրավաբանական անձնավորություններին հատուկ սեփականության պարագաներից: Այս վերջինները կարող են ենթակա լինել սակարկության, բանակցության կամ փոխանակության՝ ըստ կողմերի տրամադրության եւ կամքի: Հայրենական ժառանգությունը սակարկելի չէ: Այն գին չունի: Թվերի լեզուն տեղ չունի հոգեւոր արժեքների աշխարհում: Մենք դեռ երկար ճամբա ունենք կտրաելու համայն ազգությամբ: Մեր մեծ գործը մեր առջեւում է դեռ: Մենք պարտավոր ենք հասկանալ մեր պահանաջատիրության էությունը: Պարտավոր ենք այն հասկանալ գիտությամբ եւ մանրամասնությամբ: Պարտավոր ենք ճիշտ կողմնորոշվելու որոգայթներով լեցուն այս դաշտի մեջ: Պարտավոր ենք գործել գերազանցորեն հստակ մտատեսիլով:

Կարո ԱՐՄԵՆՅԱՆ

Այս տարի պիտի ստանան երկար սպասված առաջին պտուղները

Հովիկ եւ Վրեժ Եսմերյանների ծնողներն արմատներով կիլիկյան Հայաստանից են: Կիլիկիայի ջարդերի ժամանակ ապաստանել են Սիրիայում, որտեղ զբաղվել են հողագործությամբ՝ հիմնականում ցորենի ու գարիու մշակմամբ: Եղբայրները հաճախել են տեղի հայկական դպրոցը: Վրեժը Սիրիայում սովորել է մեքենաշինություն եւ զբաղվել ավտոպահեստամասերի վաճառքով:

Երբ սկսվեց Սիրայի քաղաքացիական պարերազմը, Հովիկն արդեն ամուսնացած էր եւ ուներ 3 զավակ: Գնալով՝ պատերազմը օր օրի թեժանում էր, եւ Եսմերյան եղբայրները պետք է որոշում կայացնեին՝ գա՞լ Հայաստան, Արցախ, թե՞ տեղափոխվել ուրիշ երկիր...: Սկզբում՝ 2011թ. եկավ Վրեժը: Ուսումնասիրելով Ղարաբաղն ու Հայաստանը՝ եկավ այն եզրակացության, որ Արցախն իրենց համար ավելի հարմար է: «Մենք հոգնեցինք օտար երկրում ապրելուց, որտեղ կառուցում, շինում ես ու վստահ չես, որ մի օր չես կորցնելու այդ ամենը,- ասում են եղբայրներն ու շարունակում,- այստեղ գոնե գիտես, որ հայրենիքումդ ես, եւ, վերջիվերջո, եթե կռիվ էլ լինի, գիտես ինչի համար է կռիվը, գիտես ինչի համար ես կռվում»: Տեղափոխվելով Արցախ՝ Վրեժն էլ ամուսնացավ: Հիմա սպասում են իրենց առաջնեկին: Եղբայրները, պահպանելով հին ավանդական սովորույթը, ապրում են միասին: 4 տարի է արդեն՝ մշակում են այգիների 15 հեկտար տարածք: Ծառերը բերել են Սիրիայից: Ունեն մոտ 20 տեսակի մրգատու ծառեր: Այգիների հիմնական աշխատանքը կատարում են եղբայրները: Նրանց օրը սկսում է վաղ առավոտից եւ վերջանում ուշ գիշերը: «Այգեգործությունը մի քիչ դժվար գործ է, շատ համբերություն է պահանջում,- անկեղծանում են եղբայրները: Այգուց բերք ստանալու համար պահանջվում է 4-5 տարի: Ափսոսում ենք, որ այդ գործով Ղարաբաղում չեն զբաղվում: Այստեղի հողերն իսկը այգեգործության համար են: Մեր գործն օրինակելի է դարձել շատերի համար: Նկատում ենք, որ մեր դաշտերի հարեւան տերերն էլ են սկսել ծառեր տնկել: Հուսամ, որ մեր գործը օրինակ կդառնա նաեւ մյուսների համար: Եթե պատերազմից հետո ամեն ընտանիք գոնե մեկ հեկտար այգի ցաներ, այսօր մենք կունենայինք այգեգործության հսկայական ցանց»: Այգեգործ եղբայրները բողոքում են տեղացիների? հողի նկատմամբ անտարբեր լինելուց: «Մեզ սեզոնային աշխատանքների համար աշխատողներ են պետք, բայց այդ աշխատողներին գտնելը շատ դժվար է: Այս հարցում պետությունը մեղավոր չէ: Մեկ ձեռքը ծափ չի տալիս,-նշում է Հովիկը եւ ավելացնում,- Ղարաբաղի հողերը ավելի բերրի են, քան Արարատյան դաշտի հողերը, բայց այդ հողերը կերակրում են եւ հայաստանցիներին, եւ ղարաբաղցիներին, նույնիսկ արտահանում էլ են բերքը»: Նա գտնում է, որ գյուղացին պետք է տնտեսություն հիմնի, ունենա բերք, իսկ պետությունը պետք է աջակցի, որպեսզի գործը երկրում դառնա առաջնահերթություն: «Այսօր Ղարաբաղում մարդիկ կամ վաճառական են, կամ էլ պետական համակարգի աշխատողներ: Վաճառական լինելն ավելի ձեռնտու է, որովհետեւ, օրինակ, նա գյուղացուց 80 դրամով լոլիկ է առնում, վաճառում՝ 200 դրամով: Եթե մենք խենթ չլինեինք, ապա այն ներդրումը, որը դրեցինք այգեգործության զարգացմանը, կներդնեինք կենտրոնում՝ մեծ խանութ հիմնելու վրա ու թագավորի պես կապրեինք: Բայց հենց այդ է պատճառը, որ երկիրը առաջ չի գնում: Աշխատելու համար Ղարաբաղը շատ ջանք ու համբերություն է պահանջում: Մենք գիտեինք, որ մեզ համար դժվար է լինելու, բայց մենք խենթի պես սիրում ենք մեր հայրենիքը, մեր հողը, դրա համար դժվարությունները մեզ համար երկրորդական են: Մենք ուզում էինք, որ մեր երեխաները մեծանան մեր հայրենիքում, որտեղ մենք շրջապատված ենք հայերով: Այո, ճիշտ է, Սիրիայում էլ մենք չձուլվեցինք, բայց երեխաներն այստեղ մեզ համար բացարձակ մտահոգություն չեն, այստեղ անվտանգ է, դա շատ մեծ կարեւորություն է: Դուրսը ավելի հեշտ է գումար վաստակելը, բայց օրվա 24 ժամը դու անհանգստանում ես քո երեխայի մասին,- ասում են նրանք եւ նաեւ շեշտում, - մեզ Ղարաբաղում շատ օգնեցին: Մենք խնդիր չունեցանք օրենքի, թղթաբանության առումով, երեխաները ստացան շատ մեծ աջակցություն ուսուցիչների կողմից: Սիրիայում երեխաները դժվարությամբ էին գնում դպրոց, եւ ամեն տեսակի արդարացումներ էին փնտրում չգնալու համար՝ հիվանդ եմ, գլուխս ցավում է, բայց այստեղ, եթե երեխաներին ուզում ենք պատժել, ասում ենք՝ վաղը դպրոց չեք գնալու»,- ծիծաղելով պատմում են ծնողները:

Էլիզան՝ Հովիկի կինը, պատմում է, որ երեխաները շատ շուտ հարմարվեցին Ղարաբաղին, եւ՝ որ դպրոցն էլ շատ մեծ կարեւորություն ունեցավ այս գործում: Միայն արեւելահայերենը սովորելու մեջ են դժվարանում, բայց ուսուցիչները չեն կառչում այդ հարցից: «Առավոտյան, երբ երեխաները դպրոց են գնում, փողոցն անցնելիս նրանց ուղեկցում են ոստիկանները: Շատ հաճելի եւ հուզիչ է այս սովորությունը Ղարաբաղում. կարծես թե՝ այդ երեխաներն իրենցը լինեն»,- ասում է Էլիզան: Հովիկի ու Էլիզայի երեխաները դասերից բացի զբաղվում են երաժշտությամբ: Տղան ջութակ է նվագում, աղջիկը՝ դաշնամուր: Ասմարյան եղբայրներն ապրում են վարձով: Հիմա, նրանք դիմել են կառավարությանը եւ նրանց խոստացել են տան հիպոթեքով աջակցել: Ընտանիքի անդամները միայն մի ցանկություն ունեն. ուզում են, որ Արցախն ավելի զորանա, ավելի շատ ընտանիքներ տեղափոխվեն այստեղ եւ իրենց ապագան կերտեն հայրենի հողում:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Փոքրամարմին այդ կինը շարժման տարիներին առաջնորդ էր

Սասունիկ Ալեքսանյանի մասին լսել էի, բայց բախտ չէի ունեցել հանդիպելու: Զանգս, բնականաբար, անակնկալի բերեց նրան: Առաջին արձագանքը եղավ հետեւյալը՝ մի՞թե ինձ հիշող կա: Սասունիկի՝ ինձ հարցազրույց չտալու բոլոր փորձերը դատապարտված էին անհաջողության..

Փոքրամարմին եւ կենսախինդ այդ կինը Արցախյան շարժման տարիներին հազարավորների համար առաջնորդ էր. «Ես 1988 թվականին Արարատի մարզի Նոր կյանք համայնքի մշակույթի տան տնօրենն էի: Տեղեկացա, որ Երեւանում ցույց է լինելու: Վազգենն ասաց (Վազգեն Սարգսյանի մասին է խոսքը)՝ եթե կարող եմ, մի 50 մարդ տանեմ ինձ հետ Երեւան՝ ցույցին մասնակցելու համար: Ասացի՝ 100-ը կբերեմ,- պատմում է Սասունիկը ժպիտով,- մինչ այդ բավականին ակտիվ էի, անգամ մի քանի անգամ ոստիկանությունից զգուշացրել էին, որ լռեմ, բայց շարունակում էի ժողովրդի մոտ խոսել Արցախի հարցի կարեւորության մասին: Մշակույթի տանն էի, երբ եկան ու ինձ ասացին, որ ժողովուրդը դրսում քեզ է սպասում, որպեսզի առաջնորդես նրանց Երեւան: Մշակույթի տան աստիճաններով իջնում էի, երբ տեսա, որ մի խումբ տղաներ բիլիարդ են խաղում: Կանգնեցի ու ասացի. «Ճիշտ եք անում, շարունակեք ձեր խաղը: Ես գնամ միտինգ, գամ, հետո իմ յուբկաները կբերեմ եւ ձեզ կբաժանեմ»: Որքան էլ տարօրինակ է, բայց նրանցից եւ ոչ մեկն ինձանից չվիրավորվեց, ընդհակառակը, հասկանալով պահի լրջությունը, կանգնեցին կողքիս եւ ասացին՝ կգանք քեզ հետ, ճանապարհին էլ կմտնենք գյուղերը եւ կոչ կանենք բնակիչներին՝ միանալ մեզ: Դուրս գալով մշակույթի տան շենքից՝ աչքերիս չէի հավատում. մոտ 10 000 հոգի, պահանջատիրական պաստառներով կանգնած, ինձ էին սպասում: Այդ օրը մոտ 8 ժամ քայլեցինք՝ մինչեւ հասանք Երեւան: Մի հսկայական շարասյուն էր: Մեր քայլերթին միացել էին անգամ այն ոստիկանները, ովքեր ինձ մի քանի անգամ նախազգուշացրել էին, որ լռեմ մնամ: Առջեւից գնալով՝ հորդորում էի գյուղացիներին, որ՝ ով ինչ ունի ուտելու՝ թող հետը վերցնի: Ժողովուրդը կարծես հիպնոսացած լիներ,- հիշում է Սասունիկը,- ես մինչեւ հիմա էլ չեմ հասկանում, թե այդ ինչ ուժ էր, որ մեզ առաջ էր մղում, եւ այդ հորձանուտում ես դարձել էի հազարավոր մարդկանց առաջնորդը: Ես՝ փոքրամարմին ու փոքրահասակ մի կին...»,- պատմում է Սասունիկը:

Սասունիկը 27 տարվա վաղեմության դեպքերը հիշում է՝ ինչպես այս օրը: «Օպերայի հրապարակում միտինգներ էին, ժողովուրդը «միացում» էր գոչում: Միտինգներից մեկի ժամանակ Կարեն Դեմիրճյանը կանգնեց հարթակին եւ ասաց՝ ինչ է, Ղարաբաղն իմ գրպանում է, որ ձեզ տամ. Գորբաչյովը մերժել է: Ես չդիմացա, բարձրացա հարթակ ու ամբիոնից պահանջեցի հեռացնել Դեմիրճյանին: Այդ ժամանակ Վազգենն ու տղաներից մի քանիսը եկան, ինձ հեռացրին հարթակից՝ ասելով, որ լռեմ, թե չէ ինձ ու բոլոր կազմակերպիչներին կձերբակալեն»,- ծիծաղելով հիշում է Սասունիկը:

1990-ի սեպտեմբերի 9-29-ը՝ ԽՍՀՄ ԳԽ հերթական նստաշրջանի օրերին Մոսկվայում հացադուլ էին հայտարարել ժողովրդական պատգամավորներ՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, Զորի Բալայանը, Սոս Սարգսյանը, Սեմյոն Բաբայանը, Վաչագան Գրիգորյանը: Այդ օրերին Արցախում «Մայրություն» հիմնադրամը կանանց պատվիրակություն է ձեւավորում եւ ուղարկում Մոսկվա՝ հայ մտավորականներին աջակցելու համար: Պատվիրակության կազմում է լինում նաեւ Սասունիկը, ով երկար ժամանակ ակտիվորեն մասնակցելով Երեւանում կազմակերպվող ցույցերին՝ գալիս է այն համոզմունքին, որ Երեւանում ինքը գրեթե անելիք չունի եւ ճիշտ կլինի, եթե մեկնի Արցախ ու փորձի Արցախում իր աջակցությունը բերել ժողովրդին: Սասունիկի խոսքերով՝ մայրը, տեղեկանալով դստեր՝ Արցախ մեկնելու որոշման մասին, բարկանում է եւ պնդում, որ չպետք է մեկնի Արցախ, եւ այդ մասին հայտնում է ամուսնուն: Սակայն Սասունիկի հայրը, ով անձամբ էր իր 8 զավակների մեջ սերմանել հայրենասիրական ոգի, ողջունում է դստեր որոշումը եւ ասում՝ գնա, աղջիկս, ես էլ եմ գալու. այս շարժումը ջրի երես է հանելու ազգի սերուցքին:

Քանի որ այդ ժամանակ Արցախը գտնվում էր ինֆորմացիոն շրջափակման մեջ, հացադուլի մասնակիցներն Արցախից Մոսկվա ժամանած կանանց պատվիրակությանը հորդորեցին՝ հացադուլին միանալու փոխարեն հանդիպումներ ունենալ տարբեր մարդկանց եւ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ եւ հնարավորինս շատ ինֆորմացիա տարածել Արցախի մասին: «Երբ Մոսկվայում էինք, միտինգ էր կազմակերպվել հայոց գերեզմանատանը, որտեղ Հասմիկ Միքայելյանը ոգեւորող ելույթ ունեցավ: Հավաքվածները վանկարկում էին՝ Հայաստա՜ն, Ղարաբա՜ղ: Միտինգի թեժ պահին մեր պատվիրակությունը որոշեց, որ ես պետք է ելույթ ունենամ, իսկ ես խուսափում էի ելույթ ունենալուց: Ի վերջո, ելույթ ունեցա, ասացի. «Եկել հավաքվել եք մեռելների մեջ ու Ղարաբաղ, Հայաստան եք կանչում: Դուք փախել, եկել եք Մոսկվա եւ ուզում եք, որ մենք ձեզ համար Հայաստան ու Ղարաբաղ ազատագրենք: Դուք ինձ մի Արեւմտյան Հայաստան եք պարտք: Ես ղարաբաղցի չեմ. իմ արմատներն Արեւմտյան Հայաստանից են, իմ պապերն այնտեղ են թաղված: Մի հայրենիք եք տանուլ տվել, իսկ հիմա երկրորդն եք տանուլ տալիս: Մոսկվայում ով է ձեզ Ղարաբաղ տալու... Փոշմանեցին, որ ինձ ելույթ ունենալու հնարավորություն էին տվել»-, իր ելույթից մի փոքրիկ հատված հիշելով՝ ասում է Սասունիկը:

«Ղարաբաղն իմ հոգում է: Մկրտվել եմ Ղարաբաղում եւ հոգով ղարաբաղցի եմ»,- ասում է Սասունիկը:

Պատերազմի ողջ տարիներին Սասունիկ Ալեքսանյանը մնացել է Արցախում՝ աշխատելով որպես լրագրող հանրային ռադիոյում, իսկ Շուշիի ազատագրումից հետո հաստատվել Շուշիում եւ մինչ 2006 թվականը բնակվել Շուշիում՝ աշխատելով կրթության բաժնում որպես տեսուչ, այնուհետեւ՝ ուսուցչուհի: Սասունիկը գտնում է, որ Արցախի հողի ազատագրումը փորձություն էր հայ ազգի համար, եւ Արցախյան պատերազմը հող է նախապատրաստել Արեւմտյան Հայաստանն ազատագրելու համար, իսկ դա սարերի հետեւում չէ:

Անի ԱՉԱՏՅԱՆ

Կին, զինվոր, բուժքույր՝ Կարինե Դանիելյան

Պատերազմը շատերից է շատ բան խլել, սակայն ոմանք մնացել են իրենց գործին ու ոգուն հավատարիմ՝ չճկվելով պատերազմի թողած վերքերից ու մրմուռից: Պատերազմի վերքերը նրանք կրելու են իրենց ողջ կյանքում: Այդ վերքերը երբեմն մրմռում են, բայց երբ մարդը շրջապատված է լինում սիրով ու հոգատարությամբ, երբ զգում է, որ իր կատարածն արժեւորված է, որ իր անունը շատերին ոգի ու հպարտություն է հաղորդում, մոռանում է վերքերի մասին, զգում է հաճելի մի թեթեւություն, որպիսին զգում ես այն ժամանակ, երբ գիտակցում ես, որ ճիշտ ես գործել, ճիշտ ես ապրել քեզ բաժին հասած կյանքը...

Արցախյան պատերազմի մասնակից կանայք իրենց ոգով ու արիությամբ ցույց տվեցին, որ պատերազմը լոկ տղամարդու գործ չէ, որ կինն էլ կարող է իր նուրբ ուսերին զենք բարձրացնել ու մարտադաշտում տղամարդուց ոչ պակաս զինվոր լինել: Կինն էլ կարող է պատերազմում վերք ստանալ ու նորից ոտքի կանգնել, նորից մարտի նետվել, չընկճվել...

«Երբեք չեմ մտածել ամուսնանալու եւ ընտանիք կազմելու մասին: Հայրենիքի փրկությունից զատ ոչինչ չկար ուղեղումս: Ժամանակ էլ չկար դրա մասին մտածելու, թշնամին չէր սպասում...»,- խոստովանում է Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից Կարինե Դանիելյանը, ով այսօր Արցախի ազատագրման մարտական գործողություններին մասնակցած եւ առաջին կարգի հաշմանդամություն ունեցող միակ արցախցի կինն է: «Պատերազմին իմ մասնակցության մասին խոսել չեմ սիրում, բայց հիմա հեքիաթները շատացել են. ոմանք, որ պատերազմի ժամանակ այս կամ այն տաքուկ անկյուններում ծվարած-թաքնված էին, այսօր իրենց են վերագրում այնպիսի հերոսական դրվագներ, որոնք ծիծաղելի ու զավեշտալի են թվում մեզ՝ նրանց ճանաչողներիս համար...Այդպես չի կարելի, սերունդներին խաբել չի կարելի...»,-ասում է նա:

Կարինեն ծնվել է Շուշիում՝ 1962 թվականին: Մասնագիտությամբ տնտեսագետ է: Մինչեւ Արցախյան շարժումը աշխատում էր Պյատիգորսկում: Ծնողները Շուշիում էին ապրում: Պատմում է, որ այդ տարիներին հորը մի խումբ թուրք երիտասարդներ դաժանորեն ծեծել են եւ ծեծի հետեւանքով հայրը զրկվել է աչքերի լույսից: Բանն այն է, որ հայրն աշխատում էր փոստում. թուրքերենից, պետք եղած դեպքում, ուղարկելիք հեռագրերը թարգմանում էր ռուսերեն: Երբ Արցախում դեռ նոր սկիզբ էին առնում խմորումները, թուրքերի կողմից Մոսկվա ուղարկվող հեռագրերում գրվում էր, որ հայերն իրենք են բախումներ հրահրում, ագրեսիա ցուցաբերում: Հայրն այդ հեռագրերը թարգմանում էր՝ թաքուն փոխելով բովանդակությունը՝ փոխարենը նշելով ադրբեջանցիների բռնաճնշումների մասին: Այդ հասկանալով՝ թուրքերը մի օր նրան գիշերով կանչում են, եւ այդ օրը ճակատագրական է լինում նրա համար՝ ծեծի հետեւանքով կորցնում է տեսողությունը:

Երբ Պյատիգորսկում Կարինեն պատահական իմանում է, որ հայրը կուրացել է, վերադառնում է, սակայն բոլորը նրանից թաքցնում են հոր հետ կատարված դեպքը: Տարիներ հետո է միայն իմանում թուրքերի կատարածի մասին: Ծեծից հետո հայրը երկար չի դիմանում, հանկարծամահ է լինում: Կարինեն չի ցանկանում մորը մենակ թողնել եւ այլեւս չի վերադառնում Պյատիգորսկ:

Երբ սկիզբ առավ Արցախյան շարժումը, Կարինեն տրվեց շարժմանը. շատերի հետ իրականացնում էր ընդհատակյա աշխատանքներ: Գիտակցելով, որ պատերազմն անխուսափելի է՝ մի օր մորն ասում է. «Երբ պատերազմը սկսվի, ես էլ պիտի զինվորագրվեմ, չեմ կարող տանը նստել»: Մոր թախանձանքներին Կարինեն չի զիջում, որոշել էր...Սկզբում նա զբաղվում էր զենք-զինամթերքի գաղտնի տեղափոխմամբ: Տղերքը նրան հարգում ու սիրում էին՝ որպես քրոջ, սակայն չէին ցանկանում, որ նա ռազմադաշտ մեկներ: «Շատ տեղեր դիմեցի զինվորագրվելու համար, սակայն անընդհատ մերժում էին: Դիմեցի Աշոտ-Բեկորին, սակայն չընդունեց. այսօրվա պես հիշում եմ նրա խոսքերը՝ ջահել աղջիկ ես, ամուսնացիր, ընտանիք կազմիր, ի՞նչ գործ ունես կռվի դաշտում...Սակայն իմ որոշումը որոշում էր, ու այն իրագործելուց ետ չէի նահանջում»,- ասում է Կարինեն: «Երբ Շուշին ազատագրվեց, էլ չդիմացավ,- լրացնում է մայրը՝ Ռիմա տատիկը,- ասաց՝ մա՛մ, վե՛րջ, էլ տանը չեմ գիշերի, այսօրվանից իմ տունը զորանոցն է, ինձ չսպասես...»: Այդպես էլ եղավ. Կարինեին ընդունեցին 8-րդ վաշտը: Միանգամից հմտացավ զենքին: Բոլորը զարմացած էին: «Մի օր մի «կամազ» եկավ, կանայք էին մեջը. նրանք էլ էին եկել զինվորագրվելու: Տարբեր տարիքի էին: Ոմանք՝ որպես զինվոր, ոմանք՝ որպես բուժքույր, ոմանք էլ՝ որպես խոհարար անդամագրվեցին վաշտին: Վարդուհի, Գայանե, Արեգա, Եվգենյա, Անահիտներ, Մարգարիտաներ... Կանայք բոլորն էլ պատրաստակամ էին. գիտեին, որ պատերազմում «չամիչ» չեն բաժանում»,- ժպտում է:

Կարինեն մասնակցել է Մարտակերտի, Հադրութի, Քաշաթաղի, Շուշիի շրջանների պաշտպանական ու ազատագրական մարտերին: Տղամարդկանց հավասար կռվում էր, երբ պետք էր՝ նաեւ բուժքույրություն էր անում իր իմացածի չափով: Կանանց ներկայությունը ռազմադաշտում ոգի էր հաղորդում տղամարդկանց, ավելի զգոն ու զգաստ էին դառնում, նաեւ հեռվից միշտ աչքի պոչով հետեւում էին նրանց, թեւեւ կանայք չէին նկատում դա: «Մեր վաշտը շատ կորուստներ է տվել, շատ ընկերներ եմ կորցրել, թեժ մարտեր շատ են եղել, չեմ ուզում եւ չեմ կարող շատ բան պատմել, ինձ համար դժվար է դա: Պատերազմում հապաղելու, մտածելու ժամանակ չի լինում, աչքերդ էլ միշտ պետք է բաց լինեն, ականջներդ՝ սուր»,- ասում է նա: Հարցնում եմ. «Արդյոք պատերազմը չի՝ ավերում կնոջ հոգեբանությունը»: Մի քանի րոպե լռում է եւ պատմում սրտառուչ մի դեպք. «Առաջին զոհը, որ տեսա, 18-ը դեռ չբոլորած տղա էր, Հայաստանից էր որպես կամավոր եկել. տղերքը նրան «ճուտ» էին կոչում: Բոլորից առաջ էր վազում, ահ ու վախ չուներ: Մի օր խրամատում նրա հետ կարճ զրույց ունեցա: Նա ինձ «մորքուր» կոչեց, ես ծիծաղեցի ու ասացի, որ ընդամենը 30 տարեկան եմ: Նա կարմրեց ու ասաց, որ այսուհետ ինձ «քույրիկ» կկոչի: Քահ-քահ ծիծաղում էինք, մեկ էլ նա լռեց: Կանչեցի՝ չպատասխանեց: Մոտեցա, թափահարեցի... արդեն չկար, կոկորդից էր խոցվել...Անասելի ցավ զգացի, ուղեղս ու սիրտս մթագնեց, զգացի ինչպես ամբողջ մարմնովս ինչ-որ անբացատրելի մի բան անցավ, թափանցեց երակներս: Դա երեւի վրեժի զգացումն էր...»,- պատմում է Կարինեն եւ ավելացնում՝ գու՞ցե ես պիտի խոցվեի նրա փոխարեն: Այդ օրն ինքս ինձ ասացի. «Շանորդիներ, եթե ձեզ համար հեշտ է խոցելը, այսուհետ ինձ համար էլ հեշտ կլինի...»

Բաշարաթ գյուղի ահեղ մարտերն էին: Կանայք տղամարդկանց հավասար կռվում էին: Զոհերն ու վիրավորները շատ էին: Կարինեն ե՛ւ զինվոր էր, ե՛ւ բուժքույր: «Չէի հասցնում մեկին վիրակապել, մյուսին էին բերում: Հիշում եմ՝ ոտքից վիրավոր զինվոր բերեցին, վիրակապեցի: Վիրավորը ժպիտով հարցրեց՝ կապրե՞մ, պատասխանեցի՝ բժիշկ չեմ, բայց ինձ թվում է հարսանիքիդ մի լավ կպարես էդ ոտքով... Երբ վիրավորին տարան, այլեւս չեմ հիշում ինչ եղավ: Ամեն ինչ սեւացավ, պայթյունից սկզբում խլացա, հետո շուրջս մթնեց միանգամից: Էլ չգիտեմ ինչ եղավ, ինչքան ժամանակ անցավ: Գիտեին, թե մահացել եմ, բայց պարզվեց՝ Աստված որոշել էր ինձ խնայել...Երբ աչքերս բացեցի՝ Երեւանում էի, հիվանդանոցում: Տեղս չէի գտնում: Սկզբում մտածեցի՝ պատանդ եմ ընկել թուրքերի ձեռքը, հետո լսեցի հայերեն խոսակցություններ: Լսողությունս լարեցի, հասկացա, որ հայերեն շուրջս, ես էլ, պարզվում է, ողջ եմ մնացել»:

Մարմինը յոթ մասից վիրավորվել էր՝ ոտքից գլուխ: Ամենասարսափելին գլուխն էր:

«Ես հավատում էի, որ աղջիկս կփրկվի, ես գիտեի, որ նա ոտքի կկանգնի,- կողքից ասում է տիկին Ռիման եւ շարունակում,- նրա մարտական ընկերուհիներն ինձ սիրտ էին տալիս: Նրանք էլ հավատացած էին, որ Կարինեն պարտվողներից չէ. նա անգամ մահվան ուրվականին կհաղթի...»: Ու Կարինեն ապրեց...

Այսօր Կարինե Դանիելյանն ապրում է Շուշիի իր հայրական տանը՝ քաղաքի բնակելի շենքերից մեկի երրորդ հարկում: Նրան խնամում է մայրը՝ 80 տարեկան Ռիմա տատիկը: Տեղաշարժվելու հարցում եւս մայրն է օգնում: Ամեն անգամ երրորդ հարկից բակ իջնելը նրա համար դժվարություն է, մոր հետ իրար օգնելով՝ երբեմն իջնում-բարձրանում է: Ռիմա տատին շատ է չարչարվում, բայց չի տրտնջում, ավելին՝ ինձ հետ զրույցի ժամանակ նա ձեռքիցս բռնում ու աղջկա սենյակն է տանում. «Տես, թե ինչ ձեռագործ աշխատանքներ ունի, պարապ չի նստում, անընդհատ գործում է»,- ասում է ու ցույց տալիս Կարինեի գործվածքները: «Ինքս ինձ համար եմ գործում,- նկատում է Կարինեն,- սիրում եմ գործել ու նվիրել»:

Այնուհետեւ մայրը հպարտ ու բարի հայացքով ցույց է տալիս աղջկա շքանշանները:

Կարինեն Արցախյան պատերազմին մասնակցած, առաջին կարգի հաշմանդամություն ունեցող միակ արցախցի ազատամարտիկն է: Ստանում է 91.000 դրամ նպաստ, սակայն դժգոհողներից չէ, միայն մեկ խնդիր է նրան հուզում՝ բնակարանի հետ կապված խնդիրը: «Ուժերս չեն ներում աստիճաններով ամեն անգամ բարձրանալ ու իջնել: Եթե սեփական տան ապրեի, կհեշտանար գործս, մորս էլ այսքան չէի չարչարի...Բազմիցս դիմել եմ սեփական տուն ստանալու հարցով, բայց անպատասխան են մնացել նամակներս կամ էլ մերժվել են...

«Ես ինձ հերոս երբեք չեմ կոչել, իմ արածն ինձ համար միշտ էլ չնչին է եղել: Սերունդներն են գնահատական տալու մեր կատարածին...Իրական հերոսներ դեռ շատ կան, որոնց գործն ու անունները արխիվներում են մնացել: Պետք է բացահայտել ու խոսել իրական հերոսների մասին. պատմությունը մեզ չի ների...»:

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Թշնամու գնդակը ինձ երբեք չի կպնի. Կարոտ Մկրտչյան



Հունիսի 13-ին լրացավ Արցախյան ազատամարտի հերոս Կարոտ Մկրտչյանի անհետացման 23-րդ տարին: Կարոտը ծնվել է 1964թ. փետրվարի 19-ին՝ Սիրիայում: Հայրենասիրական ոգով դաստիարակված Կարոտը հասակ է առել Պռոշյան գյուղում: Նա իր ընկերների հետ դարձավ հայրենիք վերադարձած ՀՅԴ-ի առաջին կորիզը: Եւ հենց հայրենիքի հանդեպ անսահման սերն էլ ստիպեց նրան մասնակցելու Արցախյան ազատամարտին եւ պաշտպանելու հայրենիքն ու հայի պատիվը:

1989-ից եղել է Պռոշյանի դաշնակցական ջոկատների ընդհանուր հրամանատար, 1991թ. Ստեփանակերտի՝ Աշոտ Ղուլյանի 1-ին վաշտի գրոհային դասակի հրամանատար:

1990թ. աշնանը Կարոտի տղերքը Նոյեմբերյան-Շամշադին գծից վերադառնալուց հետո մեկնում են Հյուսիսային Արցախ, ուր Շահեն Մեղրյանի հրամանատարությամբ համալրում են Շահումյանի պաշտպանական ուժերը: 1991թ. ապրիլի 18-ին Պռոշյանի, Բաղրամյանի, Հրազդանի ջոկատները միանում են Գետաշենի՝ Թաթուլ Կրպեյանի հրամանատարության տակ գտնվող խմբերին: Դա Կարոտի, Պետոյի ու Թաթուլի առաջին եւ, ցավոք, վերջին հանդիպումն էր:

Կարոտի մարտական ընկերները պատմում են, որ խոնարհ ու համեստ Կարոտը պատերազմի դաշտում միանգամից փոխակերպվում էր ու դառնում հանդուգն մի կերպար, որի մեջ առյուծն էր խոսում: Ամենաթույլ ու նվազ զինվորն անգամ, եթե ընդգրկվում էր Կարոտի խմբում, շատ արագ կերպարանափոխվում էր, որովհետեւ նա հայի գենը արթնացնելու մեծ կարողություն ուներ: Նա մարդկանց ոգեկոչելու կախարդիչ հմայք, գործը հաղթական ավարտի հասցնելու հզոր կամք ու վճռականության անսպառ եռանդ ուներ: Հանգստի պահերին ընկերների հետ էր: Սասնա պարն ու յարխուշտան նրա կիրքն էին: Ընկերների հրճվանքն էր, երբ խրոխտ ձայնով Տալվորիկի գովքն էր երգում:

Նրանք պատմում են, որ ընկերասեր Կարոտը կատակասեր լինելով հանդերձ, «հանդուրժում» էր նաեւ իր ընկերների կատակները: «91 թիվն էր, երբ Արմենը մի վերնաշապիկի վրա տեսավ Գեւորգ Չաուշի նկարը եւ կատակելով ասաց. «Երբ դու էլ Ղարաբաղում զոհվես, քո նկարն էլ մայկաների վրա կտպեն»: Կարոտը ժպտաց ու պատասխանեց. «Թշնամու գնդակը ինձ երբեք չի կպնի»:

Այդպես էլ չպարզվեց, արդյո՞ք թշնամու գնդակը կպավ Կարոտին, թե ոչ...

Կարոտի հայրը՝ Հովհաննես Մկրտչյանը, արդեն 20 տարի է, ինչ կարոտը սրտում է ապրում: «Երբ վերջին անգամ որդիս հեռացավ, տխուր էր: Մորը ասաց՝ ես 20 օրից ետ կգամ ու չեկավ»,- հուզված պատմում է հերոսի հայրը: Բայց միեւնույն ժամանակ հպարտությամբ խոստովանում է, որ շատ բան է սովորել որդուց: «Ինչպես ասում են՝ աշակերտը գերազանցեց վարպետին: Որդին պետք է ծնողի համբավը լինի: Հպարտ եմ այնքանով, որ իմ որդին փառք ու պատիվ բերեց ոչ միայն ինձ, այլեւ իր ազգին»:

Տաթեւ ՎԵՐԴՈՅԱՆ

Կսմիթներ

Հեռու սիբիրում խմո՛ւմ է, խմո՛ւմ,
Հայրենի գյուղի կարոտից... մեռնում:

***

Կարդում ես, սակայն բան չես հասկանում,
Նորից ես կարդում, ասես բթանում,
Էլի ես կարդում... ութ, ինը անգամ
Ու նոր հասկանում, որ պետք չէր կարդալ...
Նույնիսկ մեկ անգամ:

***

Թեեւ գլուխը դատարկ է լրիվ,
Թեեւ մտքերը խառն են ու ցրիվ,
Բայց դե ասում է՝ ես խելքի ծով եմ,
Դուք մինչեւ հիմա չգիտե՞ք ով եմ...

***

Քանի որ կինը իրենից մեծ է ութ-ինը տարով,
Դրա համար էլ հետը խոսում է... հոգնակի թվով:

***

Ասում են՝ երեկ պարոն Հանեսը
Զրկվել է այնքան փափուկ աթոռից,
Ու կես ժամ չանցած՝ հոգին ավանդել
Պզտիկ ուղեղի ուժգին ցնցումից:

***

Հայրենի գյուղում տարիներ առաջ
Նա ութը մի կերպ ավարտել-պրծել,
Եկել քեռու մոտ ու Երեւանում
Գիտությունների դոկտոր է դարձել:

***

Այն տարիներին մաքուր անկյունում
Վախից դողում էր նապաստակի պես,
Հիմա ասում է՝ թուրքին Լաչինից
Ես եմ քշել, ե՛ս...

***

Կյանքում մի անգամ մեկ քաղաք գնաց,
Գլխարկը փոխեց ու այնտեղ մնաց:

***

Նա շեֆի առաջ ծռում է մեջքը,
Որ չիմանա, թե ինչ է վայրեջքը:

***

Եթե թոշակը մինչեւ տարեվերջ,
Նույնիսկ հինգ հարյուր դրամ բարձրանա,
Լավ իմացեք, որ ամե՛ն, ամե՛ն ինչ
Հիսուն տոկոսով պիտի թանկանա:

***

Նա շատ է սիրում ինքն իրեն գովել,
Երկինք հասցնել,
Ու եթե լռես, եթե չընդհատես
Մինչեւ վերջ լսես
Կարող է ասել՝ Հայոց գրերը Մաշտոցից առաջ՝
Ես եմ ստեղծել,
Ես եմ Շիրազին, Պարույր Սեւակին,
Մյուս մեծերին
Ճամփա ցույց տվել, մարդամեջ գցել...

***

Ձիուն դատեցին, կապեցին գոմում,
Որ եզը հանգիստ... արածի հովում:

***

Նա շատ էր սիրում գինին եւ օղին
Ու այդ «սիրուց» էլ ընկավ անկողին:

***

Նոր եմ իմացել, որ վերեւներում
«ամուր մեջք» ունի հարեւան Թունին,
Ու չեմ զարմանում, որ մեզ տեսնելիս՝
Ձեւացնում է, թե բարեւ տալու ժամանակ չունի:

***

Փտած վարունգը նեղացած է խիստ,
Որ ձմերուկին գովերգում են միշտ:

***

Էշի համար նոր համետ են կարել,
Կարծում է՝ հրեղեն նժույգ է դառել:

***

Այծը է՛լ կովին տեսնել չի ուզում,
Ասում է՝ ինչո՞ւ ինձ պես չի հազում:

***

Ինքը մի բան չի, արածը՝ նույնպես,
Բայց ման է գալիս բարոնուհու պես:

***

Ինքն էլ չգիտի, թե ինչ է ասում,
Բայց դե սաներին տալիս է... ուսում:

***

Նա հիմա պետ է մի մեծ հիմնարկի,
Ու էլ չի ժպտում կնոջն անհարկի:

***

Դեռ մարդու լսել նա չի սովորել,
Սակայն ուզում է ղեկավար լինել:

***

Մեկ-մեկ ուզում է խելոք ձեւանալ,
Բայց դե կարո՞ղ է էշը ձի դառնալ:

***

Ուլեր տեսնելիս՝ առյուծ է հսկա,
Ցուլեր տեսնելիս՝ թույլ կըմկըմա:

Միքայել ԲԱԼՅԱՆ

Թոշակառու ուսուցիչ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ